

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ԴԻՄՆԱՅԱՐՑԵՐ

Նարինե ՀԱՅՐԻՅԱՆ

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Կարող եմ մտորել իրավունքի մասին, երբ ես գինված եմ

Պոմպեոս

1 989թ. սկսած հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև վերափոխվեց ռազմական առճակատման: Նույնիսկ պատերազմական թեժ գործողություններին զուգահեռ՝ Արցախի ժողովուրդը անկախացման ողջ գործընթացը համահունչ է եղել միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

ԽՍՀՄ փլուզման ընթացքում Ղարաբաղի ժողովուրդը օգտագործեց իրեն վերապահված՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» 1990թ.-ի ապրիլի 3-ի՝ օրենքով նախատեսված իրավունքը, համաձայն որի՝ խորհրդային հանրապետությունները, ինքնավար կազմավորումները, ինչպես նաև առանձին ազգային խմբեր հանրաքվեի միջոցով կարող էին որոշել դուրս գալ ԽՍՀՄ կազմից կամ մնալ նրա կազմում, ինչպես նաև ինքնուրույն որոշել իրենց պետաիրավական կարգավիճակը: ԽՍՀՄ այն օրենքը բխում է ժամանակակից միջազգային իրավունքից՝ համաձայն որի՝ «բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատ, առանց արտաքին միջամտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը ... և բոլոր պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ժողովուրդներին ինքնորոշման, ազատության

և անկախության իրենց իրավունքից զրկող ցանկացած բռնի գործողություններից»:

Ղարաբաղյան պետականության անկախության վերականգնման գործընթացի սկիզբը դրվել է 1991թ. սեպտեմբերի 2-ին, երբ ժողովրդական պատգամավորների՝ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը³: 1991թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվե, երբ ԼՂՀ քաղաքացիների բացարձակ մեծամասնությունը (քվեարկողների 99,89%) կողմ արտահայտվեց անկախությանը⁴, և համաժողովրդական հանրաքվեի արդյունքների հիման վրա ԼՂՀ առաջին գումարման նորընտիր Խորհրդարանի 1992թ. հունվարի 6-ին ընդունած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին Հռչակագիրը, «ելնելով ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքից, հիմնվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի կամքի վրա, որն արտահայտվել է 1991 թ.-ի դեկտեմբերի 10-ին կայացած հանրապետական հանրաքվեի միջոցով..., հաստատելով հավատարմությունը 1991թ.-ի սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հայտարարելու մասին Հռչակագրի սկզբունքներին..., հարգելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Անվտանգության և համագործակցության հարցերով եվրոպական խորհրդակցության մասնակից երկրների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի և մի-

ջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի սկզբունքները և հետևելով դրանց, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ պետականությունը»⁶, եզրափակիչ ակտը դարձավ ղարաբաղյան պետականության վերականգնման գործընթացում:

Արցախյան պետականության կազմավորման կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ 1991թ.-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի օրինականությունը միջազգային իրավունքի տեսանկյունից չի կարող որևէ կասկած հարուցել: Հանրաքվեն անցել է ինչպես միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, այնպես էլ այդ ժամանակ դեռ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան: Ադրբեջանական կողմը անընդմեջ պնդում է, որ վերոհիշյալ հանրաքվեն չի կարող համարվել օրինական, քանի որ ադրբեջանցիները դրան չեն մասնակցել: Նման պնդումը տեղին չէ այն պարզ պատճառով, որ ԼՂՀ կենտրոնական ընտանական կոմիտեն հայ և ադրբեջանցի բնակիչներին տրամադրել է Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը որոշելու հավասար հնարավորություն, և այս փաստն ամրագրված է միջազգային դիտորդների կողմից: Սակայն ադրբեջանական բնակչությունը չի մասնակցել քվեարկությանը՝ սեփական կամքով հրաժարվելով այն տարածքի ապագա կարգավիճակը որոշելու իր իրավունքից, որտեղ նա ապրում էր: ԼՂ-ում հանրաքվեի կազմակերպման բոլոր պայմաններն ու ամբողջ ընթացքը համապատասխանում էին հանրաքվեի կազմակերպման միջազգային չափանիշներին:

Պետք է նաև հիշել, որ ԼՂՀ հռչակումը տեղի է ունեցել 1991թ.-ի օգոստոսի 30-ի Ադրբեջանի Գերագույն խորհրդի «Պետական անկախության վերականգնման մասին» Հռչակագրի ընդունումից հետո, որի համաձայն՝ Ադրբեջանական Հանրապետությունն իրեն հռչակել է 1918-1920թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրա-

պետության իրավահաջորդը⁶: Այս կերպ մերօրյա Ադրբեջանը հրաժարվել է խորհրդային իրավական ժառանգությունից՝ կորցնելով Լեռնային Ղարաբաղը ղեկավարելու բոլոր իրավունքները:

Արցախի ժողովրդի՝ իր ապագայի կառուցման կամարտահայտման մեկ այլ վառ օրինակ է 2006թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական հանրաքվեն: ԼՂՀ Հիմնական օրենքի ընդունումը ոչ միայն խթան էր քաղաքացիական հասարակության զարգացման համար, այլև սահմանադրական մակարդակով ամրապնդել է ԼՂՀ պետական ինքնիշխանությունը: Այն մեկ անգամ ևս հաստատել է Արցախի ժողովրդի հավատարմությունը անկախության ու ժողովրդավարական զարգացման սկզբունքներին:

Պետական ինքնիշխանության ու Ադրբեջանից անկախ զարգացման ուղիների ընտրությունը և ինտեգրումը ժողովուրդների համաշխարհային ընկերակցություն Արցախի ժողովրդի անքակտելի իրավունք են և հիմնվում են միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերի վրա: Որպես կայացած անկախ պետություն, որն արդեն 20 տարվա պատմություն ու պետականության համար անհրաժեշտ բոլոր պահանջներն ու հատկանիշներն ունի, Արցախի Հանրապետությունը կարող է օգտվելու միջազգային իրավունքում արդեն գոյություն ունեցող նախադեպերից՝ ՄԱԿ-ին անդամակցելու և համաշխարհային ընտանիքի անդամ դառնալու համար: ԼՂՀ-ն ամբողջովին բավարարում է ՄԱԿ-ին անդամակցելու այն պահանջները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ 1948թ. մայիսի 28-ի Նոր անդամներ ընդունելու մասին խորհրդատվական եզրահանգման մեջ, համաձայն որի «Անդամակցությունը Միացյալ ազգերին բաց է այն բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք ընդունում են ՄԱԿ-ի Կանոնադրության պարտականությունները, ի վիճակի են և պատրաստ հետևելու այդ պարտականություններին»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Այս իրողություններն ընդունվում են ինչպես առաջատար միջազգային կազմակերպություններում, այնպես էլ մի շարք բարձրաստիճան քաղաքական գործիչների ու փորձագետների կողմից: Այսպես օրինակ՝ 1999թ. մարտի 11-ին Եվրախորհրդարանը որոշում ընդունեց, որում ամրագրում է. «1991թ.-ի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հռչակել է իր անկախությունը՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային պետությունների նույնատիպ հռչակագրերի օրինակով»⁸: Դրանով իսկ փաստորեն ճանաչվել է Ղարաբաղի (ինչպես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) անկախության հռչակման միջազգային-իրավական հիմնավորվածությունը:

Իսկ 2005թ. սեպտեմբերին՝ ԼՂՀ անկախության հռչակման 14-րդ տարեդարձը տոնելու ժամանակ, ԱՄՆ 59 կոնգրեսականներ, որոնք ներկայացնում էին թե՛ Դեմոկրատական և թե՛ Հանրապետական կուսակցությունները, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին ուղղել են ուղերձ՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Փաստաթղթում ընդգծվում է. «Ժողովրդական ճանապարհով ընտրված կառավարությամբ, մարտունակ զինված ուժերով և անկախ արտաքին քաղաքականությամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լիովին համապատասխանում է պետականության միջազգային չափանիշներին: Իր անկախության 14 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղն ապացուցել է, որ կարող է լինել միջազգային ընկերակցության հուսալի գործընկեր: Լեռնային Ղարաբաղը զգալիորեն նպաստել է Հարավային Կովկասի խաղաղությանն ու կայունությանը...»⁹:

Այն, որ Արցախի Հանրապետությունը, ի տարբերություն Ադրբեջանի, հակամարտության առաջին իսկ օրվանից հավատարիմ է հակամարտությունների խաղաղ

կարգավորման ու ուժի չկիրառման սկզբունքներին, անհերքելի փաստ է: ԼՂՀ իշխանությունները հակամարտության կարգավորման ողջ ընթացքում ցուցաբերել են հավատարմություն խաղաղ բանակցություններին: Արցախի Հանրապետությունը գիտակցում է իր պատասխանատվության չափն ինչպես հակամարտության կարգավորման, այնպես էլ տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության հաստատման գործում: Ղարաբաղյան կողմը բազմիցս ադրբեջանական կողմին երկխոսության պատրաստականություն է հայտնել՝ ոչ միայն տարածքների, այլև մի շարք այլ խնդիրների կարգավորման կապակցությամբ, ինչպես օրինակ՝ փախստականների հարցը և այլն: Պաշտոնական Բաքուն, հրաժարվելով երկխոսության մեջ մտնել Արցախի իշխանությունների հետ, ցուցաբերում է հարցի կարգավորման ոչ կառուցողական մոտեցում: Եվ այս ամենն այն դեպքում, երբ հենց Ադրբեջանն է պատասխանատու Արցախի ժողովրդի խաղաղ ինքնորոշման իրավունքի իրականացման գործընթացը ռազմական հակամարտության վերածելու համար: Լինելով Ադրբեջանի սանձազերծած պատերազմի սուբյեկտ՝ Ղարաբաղը պետք է նաև լինի բանակցային գործընթացի լիիրավ սուբյեկտ: Լեռնային Ղարաբաղի՝ հակամարտության լիիրավ կողմ լինելու փաստը ամրագրվել է դեռևս 1994թ.-ին հրադադար հաստատելու մասին Բիշքեկի արձանագրությունում, որը ստորագրվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի և Ադրբեջանի կողմից ԵԱՀԽ բուդապեշտյան խորհրդաժողովի ընթացքում¹⁰: Այս փաստը նաև ամրագրվել է ԵԱՀԿ Դեկավար խորհրդի առաջին հանդիպման ընթացքում՝ «գործող համանախագահի 1995թ.-ի մարտի 31-ի որոշման»¹¹ մեջ: Համաձայն այս փաստաթղթերի՝ ԼՂ հակամարտության կարգավորման գործող մեխանիզմ պետք է դառնան ԼՂ մասնակցությամբ բանակցությունները:

Միջազգային հարաբերությունների ժա-

մանակակից պրակտիկայում գոյություն ունեն մանատիպ հակամարտությունների կարգավորման համանման օրինակներ, որոնք չեն կարող չկանխորոշել որոշակի իրավաքաղաքական հետևանքներ՝ այդ թվում նաև դարաբաղյան խնդրի կարգավորման ենթատեքստում: Խոսքը այնպիսի երևույթների մասին է, ինչպիսիք են.

– անկախության մասին հանրաքվեներ, որոնք կայացել են կամ պիտի կայանան Արևելյան Թիմորում, Էրիտրեայում, Քվեբեկում, Ջիբրալթարում, Ֆարերյան կղզիներում, Արևմտյան Սահարայում, Հարավային Սուդանում, Չերնոգորիայում, Նոր Կալեդոնիայում,

– ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի արժեքի բարձրացում. վերջին շրջանում մանատիպ հակամարտությունների կարգավորման ուղիների համեմատական ուսումնասիրությունը, այդ թվում Պաղեստինի ու Կոսովոյի դեպքերը, վկայում են, որ մանատիպ բոլոր հակամարտությունները փաստացիորեն լուծվում են՝ հիմնվելով ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրականացման վրա:

Հետաքրքրություն է առաջացնում մի շարք արևմտյան երկրների դիրքորոշումն այն հարցի շուրջ, թե Կոսովոն չի կարող նախադեպ հանդիսանալ այլ՝ հատկապես հետխորհրդային տարածքում ծագած հակամարտությունների համար: Պատճառաբանելով իրենց դիրքորոշումը՝ վերոհիշյալ կողմնորոշման ջատագովները հիմնվում են մի շարք հատկանիշների վրա, որոնցով Կոսովոյի և Ղարաբաղի հակամարտությունները իրարից տարբերվում են: Սա, իհարկե, հակամարտության ձևաչափն ու զարգացումն է, հասարակությունների տրամադրվածությունը, խաղաղության պահպանման ու անվտանգության ապահովման մեխանիզմներն ու նախ և առաջ Կոսովոյի կարգավիճակի նկատմամբ Արևմուտքի մոտեցումները: Այդ, դժվար է չճանաչել սկզբունքային տարբերությունների առկայությունը երկու հակամարտությունների միջև, բայց և չի կարելի մեր-

ժել այն հանգամանքը, որ երկու հակամարտությունների դեպքում գոյություն ունեն մի շարք ընդհանրություններ: Այսպիսով չի կարելի բացառել, որ մեկ խնդրի կարգավորման համար առաջադրված մոտեցումներն ու որոշումները կարող են օգտակար լինել մյուսի լուծման համար: Խոսքը նախ և առաջ այնպիսի հանգամանքի մասին է, ինչպիսին է հանրաքվեի միջոցով ինքնորոշման իրավունքի հաստատումը: Երկու դեպքերում էլ գոյություն ունի պետության, արդյունավետ կառավարում չիրականացնելու արդյունքում, որոշակի տարածքի նկատմամբ միջազգայնորեն ճանաչված իրավունքների կորստի հաստատում՝ հիմնված իշխանությունների կողմից միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների, ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգման ու տարածաշրջանային անվտանգության վրա:

Իրականում Ղարաբաղյան հիմնախնդրի յուրահատկությունը այն է, որ ԼՂՀ միջազգային-քաղաքական ճանաչման իրավունքը հավասարապես հիմնվում է և Արցախյան պետականության գործունյա լինելու, և նրա հռչակման ու հետագա զարգացման քաղաքական ու պատմաիրավական հիմքերի անթերիության վրա: Արցախի Հանրապետությունն ունի իրական պոտենցիալ ոչ միայն սեփական երկիրը դեկլարելու, այլ նաև տարածաշրջանային ակտիվ դերակատարության համար, որնցից շատ հեռու է հարևան Ադրբեյջանը: Պաշտոնական Բաքուն, առաջադրելով ամբողջովին անընդունելի պայմաններ, շանտաժի ենթարկելով միջազգային միջնորդներին, օրեցօր մեծացնելով իր, այսպես կոչված, «սև ցուցակը» և հանդես գալով ռազմատենչ հայտարարություններով, բացահայտորեն ցուցաբերում է անկարողություն՝ հակասությունների կարգավորման քաղաքակիրթ ուղիների ձեռքբերման հարցում: Նման վարքագծի առկայությունը ստիպում է մեկ անգամ ևս կասկածի տակ առնել ներկայիս ադրբեյջանական վերնա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ

խավի քաղաքական հասունությունը և խելամիտ տարածաշրջանային քաղաքականություն վարելու նրա ունակությունը, առավել ևս Հարավային Կովկաս - Սև ծով տարածաշրջանում հատուկ դեր ստանձնելու նրա ձգտումը:

Հենց միջազգային հարաբերություններում խաղաղություն ու կայունություն ապահովելու համար էլ ստեղծվել և գործադրվում են ժամանակակից միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները: Մի շարք փորձագետների կարծիքով, ԼՂ հակամարտության կարգավորումը հնարավոր է իբր թե երկու՝ իրար հակառակ սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի համադրմամբ: Սա թյուր կարծիք է: Երբ խոսում ենք տարածքային ամբողջականության մասին երկու հիմնական փաստաթղթերի մասին կարելի է վկայակոչել ՄԱԿ-ի Կանոնադրությունը և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտը: Իսկ որքանով են դրանք կիրառելի Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում: Կանոնադրությունը իհարկե գերակա է մնացած բոլոր միջազգային փաստաթղթերի նկատմամբ: Այս դրույթն ամրագրված է Կանոնադրության 103-րդ հոդվածում, և ընդունվում է բոլոր անդամ պետությունների կողմից: Կանոնադրության առաջին հոդվածը սահմանում է կազմակերպության նպատակներն ու սկզբունքները: Համաձայն առաջին հոդվածի երկրորդ կետի. «ՄԱԿ-ի նպատակներն են. 1. ... 2. Ազգերի միջև զարգացնել բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների հավասար իրավունքների ու ինքնորոշման իրավունքի սկզբունքների հարգման վրա, և նախաձեռնել այլ համապատասխան քայլեր՝ համաշխարհային խաղաղության ամրապնդման համար»¹²: Պարզ է դառնում, որ ՄԱԿ-ը ժողովուրդների ինքնորոշումը համարում է ոչ միայն իր հիմնական սկզբունքներից մե-

կը, այլ և բարեկամական հարաբերությունների ու համաշխարհային խաղաղության հիմքը: Այսպիսով, ինքնորոշման մերժումը խոչընդոտում է բարեկամական հարաբերություններին ու համաշխարհային խաղաղությանը: Դեռ ավելին, 24-րդ հոդվածի 2-րդ կետը հաստատում է. «Այս պարտականությունների իրականացման ընթացքում Անվտանգության խորհուրդը պետք է գործի ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին համաձայն»¹³: Սա էլ իր հերթին նշանակում է, որ միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատման գործում Անվտանգության խորհուրդը պետք է առաջնորդվի ժողովուրդների ինքնորոշման գաղափարով, քանի որ դա իր՝ ՄԱԿ-ի Կանոնադրության կարևորագույն նպատակներից ու սկզբունքներից մեկն է: Իսկ ինչ վերաբերում է տարածքային ամբողջականությանը, ապա այն նույնիսկ ընդգրկված է ՄԱԿ-ի նպատակների ու սկզբունքների ցանկի մեջ: Կանոնադրությունը ներառում է միջազգային հարաբերություններում տարածքային ամբողջականության դեմ ուժի չկիրառման գաղափարը: 2-րդ հոդվածի 4-րդ կետը հռչակում է. «Բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում պետք է խուսափեն ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից...»¹⁴: Այլ կերպ ասած՝ խոսքը ոչ թե պետության տարածքային ամբողջականության պահպանման, այլ մեկ պետության կողմից մյուսի տարածքային ամբողջականության դեմ ուժի կիրառման անընդունելիության մասին է: Այս սկզբունքը որևէ կապ չունի ժողովրդի ինքնորոշման հետ, երբ բնակչությունը ցանկանում է ինքնորոշվել անկախացման միջոցով:

1952թ.-ի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գերագույն ասամբլեան ընդունել է 637A որոշումը, համաձայն որի. «ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է աջակցեն ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքին»¹⁵: Կարևոր է ընդգծել, որ ինքնու-

րոշման իրավունքի հարգումը մեկնաբանվում է որպես պարտականություն, որը բխում է ՄԱԿ-ի Կանոնադրությունից: Մեկ այլ կարևոր հանգամանք է. ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի *jus cogens* (ինպերատիվ) նորմերի բաղկացուցիչ մաս է, որը չի կարող փոփոխվել:

Միջազգային մյուս կարևորագույն փաստաթուղթը, որը հաճախ մեջբերվում է ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում, 1975թ. օգոստոսի 1-ի ԵԱՀԽ Յեխիմկյան եզրափակիչ ակտն է: Ինչպես պնդում է ադրբեջանական կողմը, այս փաստաթուղթն իբր թե պաշտպանում է տարածքային ամբողջականությունը և տարածքների անխախտելիությունը: Իրականում մասնակից պետությունները գտնում են, որ իրենց սահմանները կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համաձայն՝ խաղաղ միջոցներով ու համաձայնագրով: Այն պարզաբանում է, որ տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության դեմ ուժի կիրառումը անընդունելի է. «Մասնակից պետությունները իրենց փոխադարձ հարաբերություններում, ինչպես նաև միջազգային հարաբերություններում ընդհանրապես հեռու կմնան ցանկացած պետության տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության դեմ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից»¹⁶:

Այսպիսով միանգամայն պարզ է դառնում, որ Յեխիմկյան եզրափակիչ ակտը, ինչպես և ՄԱԿ-ի Կանոնադրությունը քննադատում են տարածքային ամբողջականության նկատմամբ ուժի կիրառումը և ոչ թե տարածքային ամբողջականության պահպանումը: Այստեղ պետք է հասկանալ և հիշել, որ Յեխիմկյան եզրափակիչ ակտը և ՄԱԿ-ի Կանոնադրությունը նպատակ են հետապնդում, խուսափելով միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, ամրապնդել համաշխարհային խաղաղությունն ու անվտանգությունը, այլ ոչ թե պետությունների արտաքին սահմանները:

Այսօր ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխան կետը (հոդված 4/2) նույնպես չի երաշխավորում պետության տարածքային ամբողջականությունը այն դեպքերում, եթե տարածքային փոփոխությունները տեղի են ունենում տվյալ տարածքում ժողովրդի կամարտահայտմանը համապատասխան:

ԼՂՀ անկախությունը և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը գտնվում են տարբեր իրավական հարթությունների վրա: Իրավական տեսանկյունից նախ ԼՂՀ անկախությունը ոչ մի կերպ չի խախտում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, քանի որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի հանդիսացել անկախ ադրբեջանական պետության մաս: Մերօրյա Ադրբեջանը իրեն հռչակել է 1918-1920թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը¹⁷, որի կազմում Լեռնային Ղարաբաղը չկար. ԼՂ այդ ժամանակ ևս ուներ վիճելի կարգավիճակ: Ինչպես գիտենք, ժամանակին Ազգերի լիգան չի ճանաչել Ադրբեջանը՝ վերջինիս հստակ սահմաններ չունենալու պատճառով: Բացի սրանից, պաշտոնական Բաքուն Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը հայտարարել է անօրինական՝ հրաժարվելով խորհրդային քաղաքական ու իրավական ժառանգությունից:

Քննելով զուտ իրավական տեսանյունից՝ կարելի է եզրակացնել, որ միջազգային հանրությունը պարտավոր է ճանաչել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը այն պարզ պատճառով, որ հակառակ պարագայում դա միջազգային իրավունքի *jus cogens* նորմի մերժում է, քանի որ ինքնորոշման սկզբունքն ու իրավունքը պատկանում են *erga omnes* դասին, այսինքն՝ միջազգային իրավունքի իրավական այնպիսի պարտավորություններ են, որոնք ոչ թե երկկողմ կամ փոխադարձ են, այլ վերաբերում են միջազգային համայնքի բոլոր անդամներին: Ինքնորոշման իրավունքի մերժումը մարդու իրավունքի ոտնահարում է,

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հետևաբար՝ միջազգային իրավունքի խախտում, որի նկատմամբ հարգանքը պայման է նախ տարածաշրջանային, ապա համաշխարհային խաղաղության համար:

Եվ այն, որ ինքնորոշման տեսքով սեփական ճակատագիրը տնօրինելը ժողովրդի բացարձակ իրավունքն է, և որի համար միջազգային իրավունքը չունի որևէ սահմանափակում, արացուլվեց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2010 թ. հուլիսի 22-ի եզրակա-

ցության մեջ. «Ղատարանը եզրահանգում է, որ 2008 թ. փետրվարի 17-ի անկախության հռչակումը չի խախտում ընդհանուր միջազգային իրավունքը, Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևը կամ Սահմանադրական շրջանակները: Հետևաբար այդ հռչակագրի ընդունումը չի խախտում միջազգային իրավունքի ոչ մի համապատասխան դրույթ»¹⁸:

Ամփոփելով վերոշարադրումը՝ կարելի է հայտարարել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է ինչպես քաղաքական, այնպես էլ միջազգային-իրավական հիմքերի առկայության առումներով:

¹ Տե՛ս «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենք, Մոսկվա, 3 ապրիլի, 1990 թ.:

² Վիգեն Քոչարյան, Միջազգային իրավունք, ԵՊՀ իրատ., Եր., 2002 թ.:

³ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիր, Սեփանակերտ, 1991թ. 2 սեպտեմբերի:

⁴ Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, Ստեփանակերտ, 10 դեկտեմբերի 1991 թ.:

⁵ Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, 6 հունվարի 1992 թ., Ստեփանակերտ:

⁶ Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О восстановлении государственной независимости Азербайджанской Республики. от 30 августа 1991 г., Газ. “Бакинский рабочий”, 3 сентября 1991 г.

⁷ International Court of Justice, Conditions of Admission of a State to Membership in the United Nations, Article 4/1, May 28, 1948

⁸ The European Parliament, Resolution of the European Parliament on Nagorno Karabakh, Resolution on support for the peace process in

the Caucasus, Strasbourg, March 11, 1999, C 175/251

⁹ Congressional letter to President George W. Bush, September 28, 2005
/http://www.nkrusa.org/press_releases/press_2005_10_03.shtml

¹⁰ Бишкекский протокол о прекращении огня в зоне нагорно-карабахского конфликта, Бишкек, 5 мая 1994 г.

¹¹ Chairman’s Summary, Senior Council, OSCE, 1-SC/Journal No. 2, Prague, 31 March 1995

¹² Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրություն, 26 հուլիսի 1945թ.:

¹³ Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրություն, 26 հուլիսի 1945թ.:

¹⁴ ՄԱԿ-ի Կանոնադրություն:

¹⁵ ՄԱԿ-ի Գերագույն ասամբլեայի որոշում 637A, 16 դեկտեմբերի 1952 թ.:

¹⁶ Եզրափակիչ ակտ, Գլուխ 1, Հելսինկի, 1 օգոստոսի 1975 թ.:

¹⁷ Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О восстановлении государственной независимости Азербайджанской Республики, 30 августа 1991 г.

¹⁸ Կոսովոյի վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություն, Հաագա, 22 հուլիսի 2010 թ.:

SEVERAL ISSUES OF FORMATION OF THE NAGORNO KARABAKH REPUBLIC AS STATE

Narine HAYRIYAN

PhD student of the chair of European and International Law, YSU

During 70 years it was the Soviet Constitution that served as the only international security guarantee for the region. After independence gained by the former Soviet republics, this frail guarantee was lost as there was legal vacuum and now alternative to substitute it. The physical security of the people of Nagorno Karabagh was at stake, as was well demonstrated by the war waged by Azerbaijan against the region and those who it considered to be its own civilians and by the decision of its Parliament to disband the regional autonomy.

In this article the author discusses the aspects of state formation of the Nagorno Karabakh Republic in accordance with international law and presents valid legal and documen-

tary basis for the realization of the right of self-determination in accordance with the norms and main principles of international law by the people of Nagorno Karabakh.

It is stated in the article that the independence of the people of Nagorno Karabakh and the territorial integrity of Azerbaijan are on different legal plane. The article also considers the possibility to use the international practice of the resolution of other similar conflicts as subjects of international law. Therefore, in case of Nagorno Karabagh, when the two principles of territorial integrity vs. self-determination are addressed, it is fully justified to speak about what contemporary international political science calls remedial secession.

The article provides legal conclusion that the Republic of Nagorno Karabakh is a politically and legally independent state, as well as the international-legal basis of the formation of state are not disputable.
